

Իսկ Պապը, որ այն ժամանակ Գրիգոր ԺԱ-ն էր (1370-1378), 1372-ի փետր. 1-ին միայն հետեւեալ թուղթը ղրկեց Կ. Պոլսի տիտղոսաւոր ինքնակալ Փիլիպպոս Գ-ին, որ Մարիամին մօրեղբայրն (1) ըլլալով՝ ի նպաստ անոր շատ դիմումներ ըրած եւ իրեն ներկայացած հայ պատուիրակութիւնը զօրաւոր յանձնարարականներով ղրկած էր Աւինտոն, պապին ներկայանալու եւ անձամբ եւս աղաչելու համար:

Թուղթ Գրիգորի ԺԱ առ Փիլիպպոս Գ (2)

Սիրելի որդւոյ 'ի Քրիստոս Փիլիպպոսի Կ. Պոլսոյ մեծափառ ինքնակալին:

Բարեւէր յօժարութեամբ ընդունեցանք Ձեր բարձրապատիւ Տէրութեան նամակներն, յորս որդիաբար կ'աղաչէիք մեզի՝ որ արժանի համարէինք առաքելական հոգածութեան փութով պարտուպատշաճ օգնութեան համեմուտ քրիստոնեայ հաւատացելոց ձեռք սիրեցեալ զստեր մերում 'ի Քրիստոս Մարիամով՝ Փոքր Հայոց թագուհւոյն, քու հոյակապ քրոջդ աղջկան եւ անոր թագաւորութեանը, մինչ մեծ տառապանաց ու վտանգի մէջ կը գտնուին թուրքաց սաստիկ թշնամութիւններէն. արդ ունկնդրութիւն շնորհեցինք անձամբ եւ նաեւ 'ի ձեռն ալոց, ըստ պատշաճի մտիկ ըրինք պատուական Եղբօր Յովհաննու Ստոյ Արքեպիսկոպոսին՝ վերոյիշեալ թագուհւոյ Պատուիրակին ու առաջիկայ թղթոցս բերողին խնդրքը՝ միջնորդութեամբ սիրեցեալ որդւոյ Մանուէլի հայկազին՝ իւր թարգմանին եւ որդւոյ Յովհաննու Լեւոնեանի՝ Յանուացի ղինուորին: Արդ շատ ցաւ կը զգանք 'ի խորոց սրտէ՝ տեսնելով որ ամբողջ քրիստոնեայ ազգք եւ ազինք, մանաւանդ այն երկիրներն որոնք սովոր էին հարկաւոր պիտոյից մէջ օգնութեան փութ:

(Indice II, C. 1): Հ. Պատուեան ինձ կը գրէ, որ այս բաղբը հրատարակած է Ալիբան իր իսպիւրէն *L'Armeno-Veneto* գործին երկրորդ մասին մէջ, եր. 118-119. բայց «քրդոյն գրութեան բուսկանը չէ՝ 1368 հոկտ. 11, ինչպէս հայերէն Հայ-Վենետց ունի (յեջ 132) այլ 1369 հոկտ. 11:» Ուրեմն սխալ է նաեւ Jorga-ի տւած 1368 բուսկանը, ինչպէս նաեւ Սխառանքին (եր. 560):

(1) Մարիամին մայրն էր Փիլիպպոս Բ-ի աղջիկը Յովհաննա՝ որ ամուսնացած էր մեր Հեքում պաւսմէի զաւկին՝ Օւնի հետ:

(2) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document III.